

1081



Ի. Վ. ՍՏԱԼԻՆ

ՃԱՌ

ԱՌԱՋԱՎՈՐ ԿՈՄԲԱՅՆԱՎԱՐՆԵՐԻ  
ՈՒ ԿՈՄԲԱՅՆԱՎԱՐՈՒՅԻՆԵՐԻ  
ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅԱՆԸ

1 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 1935 թ.

3 K 33

8 - 33

ՀԱՅԿՈՒՍՀՐԱՑ • 1935

2010

3K33

8-33

Հանձնարարք բոլոր խնդիրները, միացե՛ք

13.

Ի. Գ. ՍՏԱԼԻՆ

20001

1009  
39203  
2

ՃԱՌ

ԱՌԱՋԱՎՈՐ ԿՈՄԲԱՅՆԱՎԱՐ-  
ՆԵՐԻ ՈՒ ԿՈՄԲԱՅՆԱՎԱՐՈՒ-  
ՀԻՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅԱՆԸ



1925

10874

И. В. СТАЛИН  
РЕЧЬ НА СОВЕЩАНИИ ПЕРЕДОВЫХ  
КОМБАЙНЕРОВ И КОМБАЙНЕРОК

Арипартиздат, Эривань

Ընկերներ՝, թույլ տվե՛ք նախ և առաջ վող-  
ջուհե՛լ ձեզ այն նվաճումների առնչու-  
թյամբ, վոր դուք ձեռք եք բերել բերքա-  
հավաքի ճակատում: Ձեր նվաճումները  
փոքր չեն: Յեթե ամբողջ ԽՍՀՄ-ում մեկ  
կոմբայնի արտադրանքը միջին հաշվով մեկ  
մոտ մի տարվա ընթացքում յերկու անգամ  
ավելացել և, ապա այդ փոքր նվաճում չե:  
Այդ նվաճումն առանձնապես կարևոր է մեր  
յերկրի արայմաններում, վորտեղ տեխնիկա-  
պես կոփված մարդիկ դեռևս քիչ են: Մեր  
յերկրը միշտ աչքի յնկել տեխնիկապես  
կոփված կադրերի պակասությամբ, մանա-  
վանդ հողագործության ասպարեզում:

կադրերի տեխնիկական պատրաստում տա-  
րող յերկրի շրջանակներում—այդ շատ մեծ  
գործ է։ Այդ տասնամյակներ ե պահանջում ։  
Յեւ յեթե մենք համեմատաբար կարճ ժամ-  
կեաններում յերեկվա գյուղացու տղաներից  
ու աղջիկներից այնպիսի հիանալի կոմբայ-  
նավարներ ու կոմբայնավարուհիներ պատ-  
րաստեցինք, վորոնք դերադանցում են կա-  
պիտալիստական յերկիրների նորմաներից,  
ապա այդ նշանակում է, վոր մեզանում  
տեխնիկական կադրերի անեցման գործը յոթ  
միլիանոց քայլերով ե առաջ դնում։ Այո՛,  
ընկերներ՛ր, ձեր հաջողությունները նշանա-  
կալից են ու լուրջ, և դուք լիովին արժանի  
յեք այն բանին, վոր կուսակցության ու կա-  
ռավարության ղեկավարները վողջունեն  
ձեզ (ծափահարություններ)։

Իսկ այժմ թույլ տվեք անցնել գործի եյու-  
թյանը։

Մեզ մոտ հաճախ տեսնում են, թե մենք  
արդեն լուծել ենք հացահատիկի պրոբլեմը։  
Այդ, իհարկե, ճիշտ է, յեթե նկատի ունե-

նանք մեր ապրած այժմյան ժամանակա-  
շրջանը։ Այս տարի մենք ուվելի քան հինգ  
և կես միլիարդ փութ հացահատիկ ենք հա-  
վաքում։ Այդ միանգամայն բավական է,  
վորպեսզի կուշտ կերակրենք բնակչությանը  
և դեռ ամեն տեսակ չնախատեսված դեպ-  
քերի համար անհրաժեշտ բախկանաչափ  
պաշար ել հետ դնենք։ Այս, իհարկե, վատ  
չե այսօրվա համար։ Բայց մենք չենք կա-  
րող սահմանափակվել միայն Եւրոպի-  
որով։ Մենք պետք է մտածենք նաև վաղ-  
վա որվա մասին, մերձավորագույն ա-  
պագայի մասին։ Իսկ յեթե գործին վաղվա  
տեսակետից նայենք, ապա ձեռք բերած ար-  
դյունքները մեզ չեն կարող բավարարել։  
Ինչքա՞ն հացահատիկ հարկավոր կլինի մեզ  
մերձավորագույն ապագայում, ասենք մի  
յերեք-չորս տարի հետո։ Մեզ հարկավոր  
կլինի 7-8 միլիարդ փութ հացահատիկ։  
Ահա այս ե գործի դրությունը, ընկերներ՛ր։  
Հետևաբար, մենք պետք է հենց այժմ մի-  
ջոցներ ձեռք առնենք, փորպեսզի հացահա-

տիկի արտադրութիւնը մեզ մօտ տարեց-տարի աճի, և վորպեսզի այդ ժամկետին մենք միանգամայն պատրաստ լինենք այս կարևորագույն խնդիրն իրագործելու համար: Հնում, մինչև հեղափոխութիւնը մեր յերկրում տարեկան մօտավորապես չորս—հինգ միլիարդ փութ հացահատիկ եր արտադրվում: Այդ հացը բավականացնում եր թե վոչ—այս ուրիշ հարց ե: Համեմայն դեպս բոլորը դոնում եյին, վոր բավականացնում ե, քանի վոր ամեն տարի մօտ 400—500 միլիոն փութ հացահատիկ եյին արտահանում արտասահման: Այսպես եր անցյալում: Այլ բան ե այժմ, մեր խորհրդային պայմաններում: Յես արդեն ասացի, վոր մենք պետք ե այժմ արդեն պատրաստվենք այն բանին, վորպեսզի մերձավորագույն ապագայում, մի յերեք—չորս տարուց հետո, հացահատիկի տարեկան արտադրութիւնը հասցնենք 7—8 միլիարդ փութ: Տարբերութիւնը, ինչպես տեսնում եք, փոքր չե: Մի դեպքում՝ չորս կամ հինգ միլիարդ

փութ, մյուս դեպքում՝ 7 կամ 8 միլիարդ փութ հացահատիկ:

Վորտեղի՞ց ե ստացվում այսպիսի տարբերութիւնը: Ինչո՞վ բացատրել հացահատիկի պահանջի այսպիսի վիթխարի աճումը մեր յերկրում:

Այդ բացատրվում ե նրանով, վոր մեր յերկիրն արդեն այն չե, ինչ վոր հին, նախահեղափոխական ժամանակ եր:

Սկսենք թեկուզ այն բանից, վոր մեզ մօտ վերջին տարիներում արդյունաբերութիւնն ու քաղաքներն առնվազն յերկու անգամ աճել են հին ժամանակվա համեմատութեամբ: Այժմ մեզ մօտ քաղաքները, քաղաքների բնակիչները, արդյունաբերութիւնը և արդյունաբերութեան մեջ զբաղված բանվորներն առնվազն յերկու անգամ ավելի յեն, քան հին ժամանակ: Այս ի՞նչ ե նշանակում: Այս նշանակում ե, վոր մենք գյուղից մի քանի միլիոն աշխատավոր վերցրինք, քաղաքները փոխադրեցինք, բանվորներ ու ծառայողներ դարձ-

լինք, և նրանք այժմ մնացած բանվորներին հետ միասին առաջ են շարժում մեր արդյունաբերությունը: Այս նշանակում է, Վոր յեթե առաջ դյուղին հետ կապված միջանի միլիոն աշխատավորներ հաց ելին արտադրում, ապա այժմ նրանք վո՛չ միայն հաց չեն արտադրում, այլ ընդհակառակը, իրենք կարելի ունեն, վորպեսզի նրանց համար դյուղից հաց բերեն: Իսկ քաղաքները մեզ մոտ աճելու յեն և հացի պահանջն ավելանալու յե:

Հացահատիկի պահանջի աճման առաջին պատճառը սա յե:

Սյնուհետե: Հին ժամանակ մեզ մոտ անխնիական կուլտուրաները քիչ ելին, քան այժմ: Մենք այժմ յերկու անգամ ավելի բամբակ ենք արտադրում, քան հնում: Ինչ վերաբերում է վուլին, ճակնդեղին և ուրիշ անխնիական կուլտուրաներին, ապա մենք այդ կուլտուրաներն անհամեմատ ավելի ենք արտադրում, քան հնում: Իսկ սրբանից

ինչ է հետևում: Իսկ օրսնից հետևում է այն, Վոր անխնիական կուլտուրաների արտադրությունը պատված մարդիկ չեն կարող բավարար չափով գրավել հացահատիկի արտադրությամբ: Հետևաբար, պետք է հացահատիկի ավելի մեծ պաշար ունենալ այն մարդկանց համար, վորոնք անխնիական կուլտուրաներ են արտադրում, վորպեսզի կարելի լինի հետզհետե ավելի ու ավելի չառացնել անխնիական կուլտուրաների արտադրությունը, բամբակի, վուլի, ճակնդեղի, արեածաղիկի և այլ կուլտուրաների արտադրությունը: Իսկ անխնիական կուլտուրաների արտադրությունը մենք պետք է շարունակ ավելացնենք, յեթե մենք ջանկատում ենք առաջ շարժել մեր թեթե արդյունաբերությունը և մեր սննդի արդյունաբերությունը:

Ահա ձեզ հացահատիկի պահանջի աճման յերկրորդ պատճառը:

Սյնուհետե: Յես արդեն ասացի, Վոր հնում մեզ մոտ տարեկան չորս-հինգ մի-

լիարդ փութ հացահատիկ եյին արտադրում։ Այն ժամանակ ցարական մինիստրները սովորաբար ասում եյին. «Ինքներս կուշտ չենք ուտի, բայց հացահատիկը կարտահանենք»։ Այդ ի՞նչ մարդիկ եյին, վորոնք կուշտ չեյին ուտում։ Իհարկե, ցարական մինիստրները չեյին դրանք։ Կուշտ չուտող մարդիկ — դրանք 20—30 միլիոն դուղական չքավորներն եյին, վորոնք իսկապես կուշտ չեյին ուտում և կիսաքաղց եյին ապրում, վորպեսզի ցարական մինիստրներն արտասահման հացահատիկ արտահանելու հնարավորութիւն ունենան։ Այսպես եր հնում։ Հիմա մեզ մոտ բոլորովին ուրիշ ժամանակ ե։ Խորհրդային կառավարութիւնը չի կարող թույլ տալ, վոր բնակչութիւնը կուշտ չուտի։ Ահա արդեն 2—3 տարի յե, վոր մեզ մոտ այլևս չքավորութիւն չկա, գործազրկութիւնը վերացել ե, կուշտ չուտելն անհետացել ե, և մենք ամուր վոտք ենք դրել ունևորութիւն ուղին։ Դուք կհարցնեք—ի՞նչ յեղան 20—30 միլիոն սո-

ված չքավորները։ Նրանք անցան կուտնտեսութիւնները, հիմնավորվեցին այնտեղ և հաջողութեամբ իրենց ունևոր կյանքն են կառուցում։ Իսկ այդ ինչ ե նշանակում։ Այդ նշանակում ե, վոր այժմ աշխատավոր դուղացիներին կերակրելու համար ավելի շատ հաց ե պահանջվում, քան հնում, վորովհետև յերեկվա չքավորները, իսկ այժմ կուտնտեսականները, վորոնք հաստատվել են կուտնտեսութիւններում, պետք ե բաւականաչափ հաց ունենան իրենց ունևոր կյանքը կառուցելու համար։ Դուք գիտեք, վոր նրանք այդ հացն ունեն և ել ավելի յեն ունենալու։

Ահա հացահատիկի պահանջը մեր յերկրում հսկայական չափով աճելու յերրորդ պատճառը։

Այնուհետև։ Մեզ մոտ հիմա բոլորն ասում են, վոր աշխատավորների նյութական դրութիւնը նշանակալից չափով բաւացել ե, վոր կյանքն ավելի բաւ, ավելի ուրախ և դարձել։ Այս, իհարկե, ճիշտ ե։ Բայց սրա հե-

տեանքն այն է լինում, վոր բնակչությունն սկսել է շատ ավելի արագ բաղմանալ, քան հնում: Մահացությունը պակասել է ծննդաբերությունն ավելացել է և զուտ աճն անհամեմատ ավելի շատ է օտացվում: Այդ, իհարկե, լավ է, և մենք այդ վողջունում ենք: (Դաիլիմում ուրախ աշխուժություն): Այժմ մեղմոտ բնակչության տարեկան զուտ աճը մոտ յերեք միլիոն հոգի յեկաղմում: Այս նշանակում է, վոր ամեն տարի մենք մի ամբողջ Ֆինլանդիայի չափ աճ ենք ստանում (ընդհանուր ծիծաղ): Ահա որտ հետևանքն այն է լինում, վոր մենք պետք է ավելի ու ավելի շատ մարդ կերակրենք:

Ահա ձեզ հացի պահանջի աճման ելի՝ մեկ պատճառ:

Վերջապես ևս մի պատճառ: Յես խոռեցի մարդկանց մասին և նրանց հացի պահանջի աճման մասին: Բայց մարդկանց պարենը լուկ միայն հացով չի օհմամանափակվում: Նրանց հարկավոր է նաև միս, ճարպեղեն:

Քաղաքների աճումը, տեխնիկական կուլտուրաների աճումը, աղղաբնակության ընդհանուր աճումը, ունևոր կյանքը—այս բոլորի հետևանքը լինում է այն, վոր աճում է մսի, ճարպեղենի պահանջը: Հետևապես անհրաժեշտ է ունենալ լավ հիմքերի վրա դրված կենդանաբուծություն, մեծ քանակությամբ մանր ու խոշոր անասուններով, վորպեսզի հնարավորություն ունենանք բավարարելու բնակչության մասաթերքների աճող պահանջները: Այս բոլորը պարզ է: Բայց կենդանաբուծության անուսն աներևակայելի յե առանց անասունների համար անհրաժեշտ կերահատիկի խոշոր պաշտոնների: Միայն աճող և ծավալվող հացահատիկային տնտեսությունը կարող է կենդանաբուծության աճման համար անհրաժեշտ պայմաններ ստեղծել:

Ահա ձեզ հացահատիկի պահանջը մեր յերկրում հոկայական չափով աճելու ելի՝ մի պատճառ:

Սրանք են, ընկերներ, այն պատճառները,

վորոնք արժատապես փոխել են մեր յերկրի  
դեմքը և մեր առաջ անհետաձգելի խնդիր են  
դնում՝ հացահատիկի տարեկան արտադրու-  
թյունը մերձավորագույն ապագայում հաս-  
ցնել 7—8 միլիարդ փթի:

Արդյոք կարո՞ղ ենք իրագործել այս խն-  
դիրը:

Այո՛, կարող ենք: Այս մասին կասկած  
լինել չի կարող:

Ի՞նչ է պահանջվում այս խնդիրն իրա-  
գործելու համար:

Դրա համար ամենից առաջ պահանջվում  
է, վոր տնտեսության տիրապետող ձևը մեզ  
մոտ լինի վ՛ր՛չ թե մանր, այլ խոշոր տնտե-  
սությունը: Ինչո՞ւ հատկապես խոշորը:  
Վորովհետև միայն խոշոր տնտեսությունն  
և ընդունակ յուրացնելու ժամանակակից  
տեխնիկան, միայն խոշոր տնտեսությունն  
է ընդունակ բավարար չափով ոգտագոր-  
ծելու ժամանակակից ագրոտեխնիկական  
գիտելիքները, միայն խոշոր տնտեսությունն  
է ընդունակ, ինչպես հարկն է, պարար-

տացում կիրառելու: Կապիտալիստական  
յերկրներում, վորտեղ հողագործության  
մեջ տիրապետող ձևը անհատական մանր  
տնտեսությունն է, խոշոր տնտեսություն-  
ներն ստեղծվում են հողատերերի փոքրա-  
քանակ խմբի հարստացման և դյուղացինե-  
րի մեծամասնության քայքայման միջոցով:  
Այնտեղ քայքայվող դյուղացիների հողերը  
սովորաբար անցնում են հարուստ հողատե-  
րերի ձեռքը, իսկ դյուղացիներն իրենք,  
վորպեսզի սովից չմեռնեն, վարձով աշխա-  
տողներ են դառնում այդ հողատերերի  
մոտ: Այս ուղին մենք սխալ ու քայքայիչ  
ենք համարում: Այն մեզ համար անընդու-  
նելի յե: Այդ պատճառով էլ մենք հողագոր-  
ծության մեջ խոշոր տնտեսություններ կազ-  
մելու այլ ուղի յենք բռնել: Մենք բռնել  
ենք մանր դյուղացիական տնտեսություն-  
ները համախմբելու և խոշոր կոլեկտիվ  
տնտեսություններ կազմելու ուղին, տնտե-  
սություններ, վորոնք հողը մշակում են կո-  
լեկտիվ աշխատանքով և վայելում են խո-

չոր տնտեսութեան բոլոր բարեքներն ու  
հնարավորութեանները: Այդ—կոլտնտեսու-  
թեաններէ ուղին է: Այժմ խոշոր տնտեսու-  
թեան կոլտնտեսային ձևը մեզ համար, մեր  
հողագործութեան տիրապետող ձևն է ար-  
դյոք: Այո՛: Այժմ մեր կոլտնտեսութեան-  
ներում է ամբողջ գյուղացիութեան մոտա-  
ւորապէս 90 տոկոսը: Հետեապէս, հողա-  
գործութեան մեջ խոշոր տնտեսութեանը,  
կոլեկտիվ տնտեսութեանը վորպէս տիրա-  
պետող ձև,—մեզանում արդէն առկա յէ:

Յերկրորդ՝ դրա համար պահանջվում է,  
վոր կոլտնտեսութեանները, մեր խոշոր  
տնտեսութեանները բաժանահատիկ պիտանի  
հող ունենան: Արդյո՞ք մեր կոլտնտեսու-  
թեաններն այդպիսի հողեր ունեն: Այո՛,  
ունեն: Դուք գիտեք, վոր բոլոր ցարական,  
կալվածատիրական ու կուլակային հողերն  
արդէն հանձնված են կոլտնտեսութեան-  
ներին: Դուք գիտեք, վոր այդ հողերն ար-  
դէն ընդմիջա ամբողջված են կոլտնտեսու-  
թեաններին: Հետեաբար, կոլտնտեսու-

թեանները բաժարար չափով պիտանի հողեր  
ունեն նրա համար, վորպէսզի ամբողջ թա-  
փով ծախվին հացահատիկի արտադրու-  
թեանը:

Յերկրորդ՝ դրա համար պահանջվում է,  
վոր կոլտնտեսութեաններն ունենան բա-  
ժանահատիկ տեխնիկա, տրակտորներ, գյու-  
ղատնտեսական մեքենաներ, կոմբայններ:  
Ինքներդ հասկանում եք, վոր միայն ձեռքի  
աշխատանքով չատ բան չի կարելի անել:  
Հետեապէս, հարկավոր է հարուստ տեխնի-  
կա, վորպէսզի կոլտնտեսութեանները կա-  
րողանան ծախել հացահատիկի արտա-  
դրութեանը: Արդյո՞ք կոլտնտեսութեաններն  
այդպիսի տեխնիկա ունեն: Այո՛, ունեն:  
Յե՛վ քանի դեռ, նրանք այնքան ավելի շատ  
կունենան այդ տեխնիկան:

Վերջապէս, դրա համար պահանջվում է,  
վոր կոլտնտեսութեաններն ունենան տեխնի-  
կան կիրառելու ընդունակ, այդ տեխնիկան  
յուրացրած և այդ տեխնիկան թամբել սո-  
վարած մարդիկ, կադրեր: Արդյո՞ք կընդուն-



տեսութիւններն ունենալով աշխարհի մարդիկ,  
աշխարհի կաղերքը: Այո՛, ունեն: Ճիշտ է,  
դեռ քիչ, բայց այնուամենայնիւ դրանք  
կան: Այս խորհրդակցութիւնը, վորին ներ-  
կա յեն լավագույն կոմբայնավարներն ու  
կոմբայնավարուհիները և վորոնք կոլտնոե-  
սութիւններէ ունեցած կոմբայնավարներէ  
ու կոմբայնավարուհիներէ բանակի մի փոք-  
րիկ մասն են միայն, այս խորհրդակցու-  
թիւնն ապացուց և այն բանի, վոր կոլտնո-  
տեսութիւններում աշխարհի կաղերքը ար-  
դեն առաջ են յեկել: Ճիշտ է, դրանք, աշխ-  
արհները դեռևս փոքրաթիւ են, և այդ է,  
ընկերներ, մեր գլխավոր դժվարութիւնը:  
Բայց հիմք չկա կասկածելու, վոր այդ  
կաղերքի քանակը մեզ մոտ վո՛չ թե տարի-  
ներով ու ամիսներով, այլ որեւի՛ ու ժա-  
մերով է աճելու:

Այսպիսով, դուրս է գալիս, վոր մենք ու-  
նենք այն բոլոր պայմանները, վորոնք ան-  
հրաժեշտ են մերձավորագույն ապագայում

տարեկան 7—8 միլիարդ փթի չափ հացա-  
հատիկ արտադրելու համար:

Ահա թե ինչու յես կարծում եմ, վոր այն  
անհետաձգելի խնդիրը, վորի մասին յես  
վերեւում խոսեցի, անպայման իրագործելի  
յէ:

Այժմ գլխավորն այն է, վոր ուժ տանք  
կաղերքին, կաղերքին սովորեցնենք, հետ  
մնացողներին ողնենք՝ յուրացնելու տեխնի-  
կան, որեցոր աճեցնենք այնպիսի մարդիկ,  
վորոնք ընդունակ են յուրացնելու տեխնի-  
կան և այն առաջ քշելու: Այս է այժմ գլ-  
խավորը, ընկերներ:

Հատուկ ուշադրութիւն պետք է դարձնել  
կոմբայնների և կոմբայնավարների վրա:  
Դուք դիտեք, վոր հացահատիկային տնտե-  
սութեան մեջ ամենապատասխանատու գոր-  
ծը բերքահաւաքն է: Բերքահաւաքը սեզո-  
նային գործ է և սպասել չի սիրում: Ժամա-  
նակին բերքը հավաքեցիր—չահեցիր, բեր-  
քահաւաքն ուշացրիր—տանուլ տվիր: Կոմ-  
բայնի նշանակութիւնն այն է, վոր նա ող-

տեսութեաններն ունենալիս աղաքիս մարդիկ,  
աղաքիս կաղերք: Այս՝, ունեն: Ճիշտ ե,  
դեռ քիչ, բայց այնուամենայնիւ դրանք  
կան: Այս խորհրդակցութեանը, վորին ներ-  
կա յեն լավագույն կոմբայնավարներն ու  
կոմբայնավարուհիները և վորոնք կոտնտե-  
սութեաններէ ունեցած կոմբայնավարներէ  
ու կոմբայնավարուհիներէ բանակի մի փոք-  
րիկ մասն են միայն, այս խորհրդակցու-  
թեանն ապացուցց ե այն բանի, վոր կոտնտե-  
սութեաններում աղաքիս կաղերք ար-  
դեն առաջ են յեկել: Ճիշտ ե, դրանք, այդ  
կաղերքը դեռևս փոքրաթիւ են, և այդ ե,  
ընկերներ՝, մեր գլխավոր դժվարութեանը:  
Բայց հիմք չկա կասկածելու, վոր այդ  
կաղերքի քանակը մեզ մոտ վո՛չ թե տարի-  
ներով ու ամիսներով, այլ որերով ու ժա-  
մերով ե աճելու:

Այսպիսով, դուրս ե դալիս, վոր մենք ու-  
նենք այն բոլոր պայմանները, վորոնք ան-  
հրաժեշտ են մերձավորագույն ապագայում

տարեկան 7—8 միլիարդ փթի չափ հացա-  
հատիկ արտադրելու համար:

Ահա թե ինչու յես կարծում եմ, վոր այն  
անհետաճելի խնդիրը, վորի մասին յես  
վերելում իրոսեցի, անպայման իրագործելի  
յե:

Այժմ գլխավորն այն ե, վոր ուժ տանք  
կաղերքին, կաղերքին սովորեցնենք, հետ  
մնացողներին ողնենք՝ յուրացնելու տեխնի-  
կան, որեցոր աճեցնենք այնպիսի մարդիկ,  
վորոնք ընդունակ են յուրացնելու տեխնի-  
կան և այն առաջ քշելու: Այս ե այժմ գլխ-  
խափորը, ընկերներ՝:

Հատուկ ուշադրութեան պետք ե դարձնել  
կոմբայնների և կոմբայնավարների վրա:  
Դուք դիտեք, վոր հացահատիկային տնտե-  
սութեան մեջ ամենապատասխանատու գոր-  
ծը բերքահավաքն ե: Բերքահավաքը սեզո-  
նային գործ ե և սպասել չի սիրում: Ժամա-  
նակին բերքը հավաքեցիր—չահեցիր, բեր-  
քահավաքն ուշացրիր—տանուլ տվիր: Կոմ-  
բայնի նշանակութեանն այն ե, վոր նա ող-

նում և բերքը ժամանակին հավաքելուն:  
Այդ շատ մեծ ու լուրջ դարձ է, ընկեր-  
ներ:

Բայց կոմբայնի նշանակութունը դրո-  
նով չի սահմանափակվում: Նրա նշանակու-  
թյունը նաև այն է, վոր մեզ աղատում է  
հսկայական կորուստներից: Ինքներդ դի-  
տեք, վոր հնձիչով (жоборейка) կատար-  
ված բերքահավաքը հացահատիկի հսկայա-  
կան կորուստներ է տալիս: Սկզբում հնձել,  
հետո խրճեր կապել, հետո դեղ դնել, հետո  
հնձածը տանել կալսիչները մոտ—այս բոլոր  
կորուստներ են ու կորուստներ: Ամենքն  
ընդունում են, վոր բերքահավաքի այս սիս-  
տեմով մենք կորցնում ենք բերքի մոտավո-  
րապես 20—25 տոկոսը: Կոմբայնի մեծ նը-  
շանակութունն այն է, վոր նա այդ կո-  
րուստները աննշան նվազագույնի յե հասց-  
նում: Գործին տեղյակ մարդիկ ասում են,  
վոր հնձիչի ոգնությամբ կատարած բեր-  
քահավաքը, մնացած հավասար պայման-  
ներում, հեկտարին 10 փութ պակաս բերք

է տալիս, քան կոմբայնի ոգնությամբ կա-  
տարած բերքահավաքը: Յեթե վերցնենք  
հարյուր միլիոն հեկտար հացահատիկային  
ցանք,—խկ մենք, ինչպես հայտնի յե, դրա-  
նից անհամեմատ ավելի ունենք,—ապա հըն-  
ձիչներով բերքահավաքի կորուստները կը-  
կազմեն մի միլիարդ փութ հացահատիկ:  
Փորձեցե՛ք այժմ այդ հարյուր միլիոն հեկ-  
տարի բերքահավաքը կոմբայնի ոգնու-  
թյամբ կատարել, նկատի ունենալով, վոր  
կոմբայնը վատ չի աշխատում,— և դուք  
մի ամբողջ միլիարդ փութ հացահատիկ  
կշահեք: Ինչպես տեսնում եք, փոքր թիվ  
չէ:

Ահա թե վորքան մեծ է կոմբայնի և  
նրա վրա աշխատող մարդկանց նշանակու-  
թյունը:

Ահա թե ինչու յեռ կարծում եմ, վոր  
կոմբայնը մեր հողագործության մեջ ար-  
մատացնելը և կոմբայնավարների ու կոմ-

բայնավարուհիների մեծաքանակ կադրեր  
աճեցնելն առաջնահերթ խնդիր է:

Ահա թե ինչու, ավարտելով իմ խոսքը,  
յես կուզեյի ցանկություն հայտնել, վոր  
մեր կոմբայնավարների ո կոմբայնավարու-  
հիների թիվն աճեր վո՛չ թե որեցոր, այլ  
ժամ առ ժամ, վոր նրանք կոմբայնի տեխ-  
նիկան օովորելով և այդ գործն իրենց ըն-  
կերենքին սովորեցնելով, վերջապես իսկա-  
կական հաղթողներ դառնային մեր յերկրի  
գյուղատնտեսության մեջ:

(Փոքորկալի, յերկարատև ծափահարու-  
թյուններ, վորոնք ովացիայի և բարձրա-  
ձայն «ուռա»-յի յեմ փոխվում: Բացա-  
կանչուք-յուններ տեղերից—«կեցցե՛ սիրելի  
Ստալինը»:

Ելի մի յերկու խոսք, ընկերներ՛ր: Մենք  
այստեղ նախադահուլթյան մեջ կամացուկ  
դրուցում եյինք մեր մեջ ու գը-  
տանք, վոր այս խորհրդակցության մաս-  
նակիցներին պետք է լավ աշխատանքի հա-

մար ներկայացնել բարձրագույն պարգևի,  
չքանչանի: Այս բանը, ընկերներ՛ր, մենք մը-  
տադիր ենք ամենամոտիկ որերում իրա-  
գործել:

(Փոքորկալի, յերկարատև ծափահարու-  
թյուններ, կանչեր «ուռա»: Բացականչու-  
թյուններ — «Շնորհակալությո՛ւն ընկեր  
Ստալինին»):



Խմբ. Նշ. Մակինց, Թարգմ. Վ. Փոթեյան  
Կոնաբ. սրբագրելի Յե. Տ. Մինասյան, սրբ. Վ. Զիզեջյան

Դրամվորի լիազոր Շ-94, հրատ. № 339  
պատվեր № 420, տիրած 20,000, ինդեքս Ս-30

Հայկուստեանի տպարան, Յերեվան  
Յուրսիկեղյան № 27

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0034420

ԳԻՆԸ 10 Կ.

ЦЕНА 10 К.



И. В. СТАЛИН  
РЕЧЬ НА СОВЕЩАНИИ ПЕРЕДОВЫХ  
КОМБАЙНЕРОВ И КОМБАЙНЕРОК

Армпартиздат, Еревань